ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 98/10

Քաղ. Երեւան 05 մարտի 2010թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. մարտի 5-ի նիստում (արձանագրություն N77/1) քննարկեց ՀՀ արտոնագրային հավատարմատար Զ. Մանուկյանի 2009թ. նոյեմբերի 3-ի դիմումը «ETTORE BUGATTI» IR 653375 միջազգային բառային ապրանքային նշանի գրանցման գործողությունը չօգտագործման պատճառով ՀՀ տարածքում ԱԾՄԴ 03, 14, 18, 25 -րդ դասերի ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ։

ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից 2009թ. դեկտեմբերի 2-ին սեփականատեր Michel Buggatti S. A.-ին ներկայացված ծանուցման ստացման վերաբերյալ գործակալությունը հետծանուցում չի ստացել եւ այդ իսկ պատճառով հետաձգել էր հարցի քննարկումը, մինչեւ մարտի 5-ի նիստը։ Դեկտեմբերի 22-ի նիստի որոշումից հետո մտավախություն ունենալով, որ սեփականատիրոջ հասցեն, սխալ է արձանագրված գործակալության հիմնապաշարում, ծանուցվել է ներկայացուցչին։ Այս անգամ էլ հետծանուցում չի ստացվել, ինչպես նաեւ բողոքարկման խորհուրդը դիմումի վերաբերյալ որեւէ գրավոր արձագանք սեփականատիրոջից կամ նրա ներկայացուցչից չի ստացել։

Ընդհանուր քննարկման արդյունքում հիմք ընդունելով վերոգրյալը եւ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների

ներկայացման եւ քննարկման կարգի» 81-րդ կետի 1 ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «F. W. Brinkman GmbH» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Զ. Մանուկյանի 2009թ. նոյեմբերի 3-ի դիմումն ամբողջությամբ, եւ դադարեցնել «ETTORE BUGATTI» IR 653375 միջազգային բառային ապրանքային նշանի գրանցման գործողությունը:

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումն ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան:

Բողոքարկման խորհրդի

նախագահ Ա.Ազիզյան